

ԾՐԱԳԻՐ

«ԱԿՆԱՅԻՆ ԱԽՏԱՀԱՐՈՒՄՆԵՐԸ ՇԱՔԱՐԱԽՏԻ ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՄԱՅԻՆ ԱԿՆԱԲՈՒՅԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՅԻ

Հոկտեմբերի 29, 30, 2018թ., ք. Երևան (Մալայանի անվան ակնաբուժական
կենտրոն) և նոյեմբերի 2, 2018թ., ք. Վաղարշապատ («Էջմիածին» ԲԿ)/
նոյեմբերի 12, 2018թ., ք. Արմավիր («Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի
անվան Արմավիրի» ԲԿ)
(նախատեսվում է հետազայում միջոցառման կրկնողաբար անցկացում)

«Հայկական ակնաբուժության նախագիծ» ԲՀ

Օր 1՝ հոկտեմբերի 29		
Անցկացման վայր՝ Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն		
09:30-10:00	Մասնակիցների գրանցում, նախաթեստ	
10:00-11:00	Ցանցաթաղանթի անատոմիա և ֆիզիոլոգիա	Սիրանույշ Մատինյան
11:00-12:00	Տեսողական օրգանի ախտահարումը շաքարային դիաբետի ժամանակ	պրոֆ. Արմեն Վարդանյան
12:00-12:30	Ընդմիջում	
12:30-14:30	Դիաբետիկ ռետինոպաթիայով հիվանդների հետազոտում	պրոֆ. Արմեն Վարդանյան, Սիրանույշ Մատինյան, Լիլիթ Աբգարյան
14:30-15:00	Նեոլասկուլյար գլաուկոմա	պրոֆ. Արմեն Վարդանյան
15:00-15:30	Գրավոր թեստ	
Օր 2՝ հոկտեմբերի 30		
Անցկացման վայր՝ Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն		
09:30-10:00	Անցած օրվա ամփոփում	
10:00-11:00	Մակուլայի ախտահարումը դիաբետիկ ռետինոպաթիայի ժամանակ	պրոֆ. Արմեն Վարդանյան
11:00-12:00	Դիաբետիկ մակուլյար այտուց, նեոլասկուլյար գլաուկոմա	պրոֆ. Արմեն Վարդանյան
12:00-12:30	Ընդմիջում	
12:30-14:30	Դիաբետիկ մակուլյար այտուցով հիվանդների հետազոտում	պրոֆ. Արմեն Վարդանյան, Սիրանույշ Մատինյան,

		Լիլիթ Արզարյան
14:30-15:00	Նեովասկուլյար գլաուկոմայով հիվանդների հետազոտում	պրոֆ. Արմեն Վարդանյան, Սիրանույշ Մատինյան, Լիլիթ Արզարյան
15:00-15:30	Գրավոր թեստ	
Օր 3՝ փոփոխվող՝ կախված թիրախային լսարանից		
Նոյեմբերի 2 Վաղարշապատի տարածաշրջանի մասնագետների համար Անցկացման վայր՝ Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, «Էջմիածին» ԲԿ		
Նոյեմբերի 12 Արմավիրի և Բաղրամյանի տարածաշրջանների մասնագետների համար Անցկացման վայր՝ Արմավիրի մարզ, ք. Արմավիր, «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի» ԲԿ		
10:00-15:30 Ընդմիջում՝ 12:00-12:30	Կիրառական պարապմունքներ և կլինիկական դեպքերի վերլուծություն	Լիլիթ Արզարյան, Սիրանույշ Մատինյան

«Հիվանդների հետազոտում» սեկցիաներում նախատեսվում է զննել, հետազոտել և քննարկել մարզի ներգատաբանների կողմից ընտրված և ուղարկված համապատասխան ախտորոշումով (շաքարախտ) հիվանդներ: Իրականացվելու է ինչպես խորհրդատվության տրամադրում՝ դասընթացավարների կողմից մասնակիցներին, այնպես և դասընթացավարների և մասնակիցների կողմից գործիքային հետազոտությունների անցկացում: Գործիքային հետազոտություններն անցկացնելու են ՄԱԿ-ի մասնագետները և սեմինարի մասնակիցները՝ անձամբ: Պլանավորվում է անցկացման վայրում առկա (հասանելի) և տվյալ հիվանդի զննման և հետազոտման համար անհրաժեշտ գործիքների և սարքավորումների կիրառում: Հետազոտությունները ներառում են. տեսողության սրության և ներակնային ճնշման չափում, բիոմիկրոսկոպիա, բիոմիկրոօֆթալմոսկոպիա, օֆթալմոսկոպիա (անուղղակի), ակնային ՈւՁ հետազոտություն, օպտիկական կոհերենտ տոմոգրաֆիա (OCT):

Յուրաքանչյուր կլինիկական դեպքի շուրջ ծավալվելու է քննարկում դասընթացավարների և մասնակիցների միջև, ապա երկկողմանի (դասընթացավարներ-մասնակիցներ) առաջարկությունների ներկայացում և հիվանդի՝ լավագույն (օպտիմալ) բուժման պլանի մշակում՝ հիվանդի հետագա վարման նպատակով:

Բացի այդ, ծրագրի կարևոր մասն է ծանոթանալ և կիրառել «Հայկական ակնաբուժության նախագիծ» ԲՀ-ի ակնահատակի նկարահանման «Remidio» սարքը:

Թիրախային լսարան՝ ակնաբույժներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 6 հոգի: